

Ամբաստանապետ Կարապետի
Ստորագրութեան Կէտն է Իմ
Աստի Խան Լորձ Կարէն :



Տարեկան գինն է Խանիկէ ԼԵԼ 120 .
Դո՛ւրսերէն Բաժանորդէ զտէն
ըն՝ Ժողովոյն Զախար Կճարեւոյն էն :

ՀԱՆԴԻՍ ՈՒԹՕՐԵԱՅ

24 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Բ. ՏԱՐԻ 1861

ԹԻԻ 3

ԴԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՆ

ԻՆՏԵՂԵՍ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ

Ազգին համար խիստ կարեւոր խնդիր մըն է գիտնալ թէ մեր ազգային կանոնադրութիւնը կամ լաւ եւ ըսենք մեր ազգային վարչութիւնն ի՞նչ կերպ պիտի ըլլայ: Եւ իրաւ ազգային գործոց եւ նոյն իսկ ազգին ապագայ վիճակը կանոնադրութեան կամ վարչութեան կերպէն կախում ունի:

Սենք չենք կրնար ըսել թէ ազգային կանոնադրութիւնը կամ վարչութիւնը ի՞նչ կերպ պիտի ըլլայ. քանզի կրնայ ըլլալ որ մեր ակնկալութեանը հակառակ ուրիշ կերպերով փոխուի, որոնք իրարմէ աւելի կամ նուազ գոհացուցիչ, աւելի կամ նուազ տեւողական ըլլան: Բայց, եթէ սկզբունքներով վրայ մեր ունեցած տեսութիւնը շիտակ է, կրնանք ըսել թէ մեր ազգային կանոնադրութիւնը կամ վարչութիւնը ի՞նչ պէս պէտք է որ ըլլայ. կամ աւելի յայտնի ըսենք՝ կրնանք ըսել թէ առանց իրաւանց եւ օրինաւորութեան սահմանէն դուրս ելած ըլլալու ի՞նչպէս կրնանք եւ պարտաւոր ենք ուղեւոր որ մեր ազգային կանոնադրութիւնն ու վարչութիւնը ըլլան:

Ըս խնդրոյն վրայ ազգին մէջ այլեայլ կարծիք, այլեայլ տեսութիւն, այլեայլ փափաք եւ այլեայլ պահանջում կամ ակնկալութիւն կայ. կրնանք ըսել նաեւ այլեայլ ոգի կայ:

Նախ՝ ազգին կանոն մը չունենալուն եթէ ոչ անտեղութիւնը՝ գէթ անկարելիութիւնը գրեթէ առհասարակ ճանչցու-

ած է ու կը խոտովանուի. ուստի եւ ամենը կ'ըսեն թէ կանոն մը ունենալու ենք: Կարծեաց՝ տեսութեան՝ փափաքի՝ պահանջման եւ ակնկալութեան տարբերութիւնը կանոնին կերպին վրայ է:

Ոմանք կ'ըսեն թէ Սահմանադրութիւն կոչուած կանոնադրութիւնը չի կրնար ըլլալ. քանզի անոր մէջ ընդհանուր քուէով ընտրեալ երեսփոխանութիւն ըլլալուն համար՝ տէրութեան քաղաքականութեանը գէմէ, եւ անհնարին է որ տէրութիւնը աւանկ բանի մը թոյլտուութիւն ընէ. ուստի եւ կը խրատեն՝ կը յորդորեն՝ կը մեղադրեն՝ կը վախճեն են՝ կը սպառնան որ սահմանադրութեան խօսքը չըլլայ. եւ կը զարմանան թէ ինչպէս ազգին մէջ տակաւին սահմանադրութիւն կոչուած կանոնն ուղեւոր համարձակողներ կան:

Ոմանք աւելի յառաջ երթալով կ'ըսեն թէ սահմանադրութիւնը ոչ միայն տէրութեան քաղաքականութեանը, այլեւ անոր կերպին հակառակ է. եւ թէ՛ բանի որ սահմանադրութեան մէջ ընդհանուր քուէարկութեան սկզբունքը կայ, անիկա քաղաքական բնութիւն մը առած կ'ըլլայ, եւ մենք կրօնականէն դուրս արածնութիւն չունենալով՝ քաղաքական բան պահանջելու կամ ընելու իրաւունք չունինք. եւ եթէ ընենք, մեծ յանդգնութիւն ըրած կ'ըլլանք եւ թերեւ տէրութեան գէմ յանցաւոր եւ կը դառնուինք:

Ուրիշներ կը կարծեն թէ սահմանադրութիւնը պահուելու է. եւ անիկա պաշտպանելու եւ յառաջ տանելու հաստատամրտութիւն եւ համարձակութիւն կը ցուցուն են:

Չենք գիտեր թէ աս իրարու հակառակ կարծիքներն ունեցողները պատճառներու գիտութեամբ ասոնք կ'ըսեն, թէ սոսկ բնական տրամաբանութեամբ ու եկամուտ տեղեկութիւններով: Բայց գիտութեան արժանի կէտ մը կայ որ սահմանադրութիւնն անկարելի համարողները տէրութիւնը պատճառ բրած են որպէս թէ տէրութիւնն է որ չուզէր, և ուրիշ բանի համար չէ եթէ ոչ ընդհանուր քուէարկութեան համար: Այս այսպէս ըլլալով պարտաւոր ենք ամեն անաչառութեամբ և զգուշութեամբ քննել թէ հպատակ ազգի մը ընդհանուր քուէարկութեան սկզբունք ունեցող կանոնադրութիւն, և ան սկզբան վրայ հիմնեալ վարչութիւնը՝ տէրութեան քաղաքականութեանը կամ անոր կառավարութեան կերպին հակառակ է: Թէ անիկա քաղաքական բնութիւն ու տէրութեան մէջ փաստակար ազդեցութիւն ունի: Եթէ ատ բաները կան, արդարեւ անիկ ետ կենալու ենք. ապա եթէ անոնց և ոչ մէկը կայ, մեր կանոնադրութեանն ու վարչութեանը ընդհանուր քուէարկութեան սկզբան վրայ հիմնուած ըլլալը չուզելը մեր կանոնադրութեանն ու վարչութեանը կատարեալ ըլլալը չուզել է: Չուզել է որ ազգին շահերն ու նիւթական և մտաւոր յառաջադիմութիւնն ամենէն աղէկ կերպով ապահովուի միջոցներն ունենայ: Չուզել է որ ազգը «լուսաւորութեան ու ժամանակին յառաջադիմութեանը պահանջած բարեկարգութիւններն ընելու» արտօնութիւնը վայելէ. արտօնութիւն մը՝ զոր Օսմանեան պետութեան ամենէն լուսաւորեալ, ամենէն բարեսէր, ամենէն վեհանձն և իր ժողովուրդին օգտին ճշմարտապէս փափաքող վեհապետներուն մէկը՝ աշխարհիս լուսաւորեալ ազգերուն լուսի լուս և անոնց ծափահարութեան ձայներովը մեղի շնորհեց:

Աս խնդրոյն քանի մը կէտերուն վրայ ուրիշ անգամ խօսած ենք. բայց խնդրոյն կարեւորութիւնը կը պահանջէ որ դարձեալ նոյն կէտերուն վրայ դառնանք. մանաւանդ որ ուրիշ քանի մը ուշադրութեան արժանի կողմեր ալ ներկայացնել հարկ է, որ խնդիրն աւելի ընդարձակութեամբ պար-

զուի: Աս խնդրոյն պարզուիլն ազգին ճշմարիտ օգուտն ուզողներուն այնչափ աւելի կարեւոր երենալու է, որչափ փափաքելի է որ ազգը մէկ կողմանէ տէրութիւն առջև անախորժ դիրք մը բռնելէ զգուշացած ատենը՝ իր շահուն դէմ փաստակար քայլեր չառնէ:

Նախ կը յորդորենք որ ազգն իր առ տէրութիւնն ունեցած հաւատարմութեան կարեւորութեանը վրայ աղէկ համոզուած ըլլայ: Այս, ճշմարիտ չայլ որ իր ազգը կը սիրէ, անոր դոյութեանն ու հաստատութեանը կը փափաքի, անոր կոչումը կը ճանչնայ, և անոր երջանիկ ապագայի մը պատրաստուիլը կ'ուզէ, աղէկ համոզուած ըլլալու է որ Օսմանեան տէրութեան հետ անդրդուելի կերպով միացած ըլլալն իր ամենամեծ պարտաւորութիւններէն մէկն է: Եւ պէտք է գիտնալ որ ազգը կը պարտաւորի Օսմանեան պետութեան հաւատարիմ կամ անոր սերտիւ յարած ըլլալ ոչ միայն 'ի խղճէ մտաց' ըստ որում կրօնքն այնպէս կը պահանջէ, այլև քաղաքականութիւնն ու իր շահը կը ստիպեն որ հաւատարմութիւնն ու յարումը իր ազգայնութեան կենսական մէկ տարրը ճանչնայ, և անիկ չխոտորի: Ինչպէս որ Օսմանեան պետութեան սկիզբէն մինչև այսօր անոր մէջ կենդանի մնացող բոլոր ազգեր, անանկ ալ Հայն աս պետութեան շնորհիւր կը կենայ ու կ'ապրի: Օսմանեան պետութենէն դուրս Հայ չկայ, և եթէ ըլլայ, կէս է և ոչ ամբողջ: Դարձեալ Օսմանեան պետութենէն դուրս Հայուն գոյութիւնը կեղակարծ է և առանց ապագայի մը յուսոյ. ուր Օսմանեան պետութեան մէջ անիկա ապահով է և ապագայի մը կրնայ ակնկալել: Աս պետութիւնն իր բուռն ժամանակը, երբ Նախախնամութիւնն արեւելքէն մինչև արեւմուտք անոր առջև բացած էր, և անոր սկզբունքներն ու քաղաքականութիւնը այժմուս ունեցածներէն տարբեր էին, իր նուաճեալ ազգերուն խնայելու և անոնք իր հզօր թեկն տակ պահելու ու խնամելու սկզբունքն ունեցաւ: Կարծես թէ գուշակելով որ, երբոր անոնց առջևն ազատութեան և յառաջադիմութեան ասպարէզը բանայ, տկարութեանը մէջ իրեն-

կուծիւնները, ան սկզբունքը տեսնել չի հանդուրժեր, Օսմանեան պետութեան ոգւոյն և իմաստութեանն անիրաւութիւնութիւնամանք ընել է :

Երկրորդ՝ ընդհանուր քուէարկութեան սկզբունքը տէրութեան կառավարութեան կերպին ալ դէմ չէ : Ասոր վրայ տես Սէր Բ. Տարի, Թիւ 1. « Սահմանադրութիւնն ինչ տեսակ կանոնադրութիւն է » անունով յօդուածը : Հոն արդէն ցուցուցինք թէ քանի որ մեր ազգային գործերը տէրութեան գործեր չեն՝ այլ լոկ կրօնական ընկերութեան մը հոգեւոր և ժամանակաւոր գործերն են, անոնք վարող և տնօրինող մարմինը, այսինքն վարչութիւն ըսածնիս, ազգին կողմէն ու և որպիսի անձինք ըլլան՝ և անոնց ընտրութեան կերպը ինչ եղանակով որ ըլլայ, տէրութեան կառավարութեանը վրայ ամենեւին ազդեցութիւն մը չունենար : Հոն ըսինք և դարձեալ կ'ըսենք թէ Հայերն իրենց համար ընդհանուր քուէարկութեան սկզբանը վրայ հիմնուած կանոն մը ունենալով՝ հազար տարի ան կանոնով վարուին, և հազար տարուան մէջ երկու հարիւր անդամ ընդհանուր քուէարկութիւններ ընեն, տէրութեան կառավարութեան ձեւ մազիւ չափ չի փոխուիր :

Թէպէտ մենք Օսմանեան պետութեան մէջ ենք և անոր իշխանութեանն ու օրէնքներուն հնազանդ, սակայն հպատակ ժողովուրդ ենք՝ ոչ թէ տիրող ազգ : Օսմանեան ազգն է տիրող ազգը. և ճշդիւ խօսելով՝ կառավարութիւնը մեր տէրն է և մեր վրայ քաղաքականապէս կ'իշխէ, բայց մեր կառավարութիւնը չէ : Մահմետական չեղող որեւիցէ հասարակութեան մը անդամ ինչ քաղաքական պաշտօն կամ արտօնութիւն ունենայ, անիկա թոյլտուութեամբ ու իբր շնորհք կը վայելէ. ասանկ օրինակներ միշտ բացառութիւն են, և տէրութեան կամքէն կախում ունին : Օսմանեան ազգն է միայն որ կառավարութեան քաղաքային և զինուորական գործերուն մէջ մասնակցութիւն ունենալու իրաւունք ունի : Անիկա մինակ ան գործերուն ու պաշտօններուն քաղաքականապէս ձեռնհաս է : Աս է Օսմանեան պետութեան դրութիւնը : Այսպէս

ըլլալով՝ մենք իբրեւ իշխեալ ազգ տէրութեան կառավարութեւն նկատմամբ գործնական ճայն չունինք, անոր կերպին և յղարարութեանը վրայ կամք մը յայտնելու իրաւունք չունինք : Օսմանեան տիրող ազգին իր կառավարութեանը հետ ունեցած քաղաքական յարաբերութեանը մէջ մենք չենք կրնար խառնուիլ, և խառնուելու չենք, քանզի իրաւունք չունինք : Կառավարութիւնն ինչ կերպ որ ունենայ, մենք անոր իբրեւ ազգային կամքով վաւերացած իշխանութեւն մը հնազանդելու հարկադրուած ենք :

Կառավարութեան նկատմամբ տէրութեան հետ մեր ունեցած յարաբերութիւնը ծառայի մը առ տէր ունեցած յարաբերութիւն է : Բայց մեր ազգային—կրօնական գործերուն նկատմամբ նոյն տէրութեւն հետ մեր յարաբերութիւնը տարբեր է : Աս բաներուն մէջ մենք կառավարութեանէն մեզի շնորհուած արտօնութեան մէջ պարունակուած և անոր էական եղող ամեն բարեկարգութիւն ուղելու, կամ գէթ մեր մէջ ան կերպ բարեկարգութիւններ ընելու իրաւունք ունինք. ասանկ կարգադրութիւններ տէրութիւնն 'ի պաշտօնէ՝ ճանչնայ կամ չճանչնայ : Արդարեւ մենք տէրութեան չենք կրնար ըսել թէ մեր ամեն ըրած մասնաւոր կարգադրութիւնները, որոնք, ինչպէս ըսինք, մեր ազգային կրօնական արտօնութեանը մէջ կը պարունակուին, ճանչնայ և վաւերացնէ : Օսմանեան կառավարութիւնը, թէպէտ 'ի սկզբանէ, բայց մանաւանդ վերջին քսան տարուէն հետէ, կրօնական ազատութեան սկզբունքը յարգելով՝ իր մահմետական չեղող հրապատակներուն սա շնորհքն ըրած է որ կրօնական հասարակութեան մը հոգեւոր և ժամանակաւոր գործերուն ազատ տնօրինութիւնն ընդհանուր կերպով անոնց արտօնացուած ու վաւերացուցած է. ան գործերուն վարչութեանը մէջ կրօնին ազատութեանն ու ապահովութեանը համար հարկաւոր եղած ամեն մասնաւոր կարգադրութիւն առանձին առանձին վաւերացնելու հարկաւորութիւն չկայ :

Եւ որովհետեւ ոմանք կարծեցին թէ Սահմանադրութիւնը քաղաքական է և քա-

պով բրիտանական է, և միանգամայն Հայաստանեայց է, կը հետեւի որ ամեն Հայ հաւատացեալ իր ազգին գործերուն (որոնք ինչպէս ըսինք՝ կրօնական են) ընդհանուր տնօրէնութեանը մէջ ձայն և որոշում ունենալու է* : Ամեն Հայուն պարտաւորութիւնն է իր եկեղեցւոյն վրայ, որ իր հաւատքը և կրօնքն ըսել է, եղած տրամադրութիւնները գիտնալ. կամ լաւ ևս ըսենք՝ ազգային գործերուն տեսչութիւնը, անոնց համար եղած ամեն տրամադրութիւն բոլոր ազգին լրութենէն, իբրեւ մի հաւատացելոց մարմինէ բղխեն : Ասոր համար կրօնքին շահը, և հաւատացելոց, ըսել կ'ուզենք Տաճկաստանի բոլոր Հայոց իրաւունքը կը պահանջէ որ, ոչ միայն ընդհանուր երեսփոխանական մարմին մը միշտ ըլլայ, այլև ան մարմինը ընդհանուր քուէարկութեամբ բոլոր ազգէն ընտրուած ըլլայ : Աս տեսութեամբ երեսփոխանաց ժողովը ոչ թէ Եւրոպայի սահմանադրական ազգաց Ազգային ժողով (ասանկէ նստիւնալ) ըսուածն է, այլ Հայ ազգին, իբրեւ կրօնական հասարակութիւն, ներկայացնող երեսփոխանական մարմինն է : Ապա ուրեմն ոչ թէ հասարակապետական հոգւոյ պտուղ, այլ բրիտանական արտօնութիւն մըն է պահանջել որ ազգային վարչութիւնը բոլոր ազգին կողմէն, ազգն իբրեւ կրօնական ընկերութիւն, իբրեւ եկեղեցի մտածելով, ընդհանուր քուէարկութեամբ ընտրուած երեսփոխաններէ կազմուի : Այդ բանի որ ազգը եկեղեցի մը, կրօնական ընկերութիւն մըն է, և ինչպէս որ ամեն ընկերութեան, ևս առաւել կրօնական ընկերութեան մը իրաւունքն է որ իր ընդհանուր հաւանութեամբն ընտրեալ ժողով մը ունենայ, որպէս զի ան ընկերութեան կամ եկեղեցւոյն շահերը ապահովուին, և որովհետեւ տերութիւնն ալ ամեն կրօնական արտօնութիւն իր հպատակ ազգերուն շնորհած է, ինչպէս կրնայ ըլլալ որ աս նպատակով ընդհանուր քուէարկութեամբ ընտրուած երեսփոխանական ժողովի մը ընդդիմութիւն ընէ, թէ որ մենք աս երեսփոխանութիւնը քաղաքական նը-

պատակով եղած, և ազգային եկեղեցւոյն կամ կրօնքին հակառակ երեցընենք, տարակոյս չկայ թէ տէրութիւնն անոր ընդդիմութիւն ընելու պարտաւոր կ'ըլլայ : Պիտի ըսուի թէ քաղաքական մտքով սահմանադրական կամ հասարակապետական կառավարութիւններ ընդհանուր քուէարկութեամբ ընտրուած երեսփոխաններ կ'ունենան : Այո, բայց քաղաքական մտքով սահմանադրական կամ հասարակապետական կառավարութիւններուն ընդհանուր քուէարկութեամբ երեսփոխաններ ունենալէն միւթէ կը հետեւի որ ուրիշ ընկերութիւն ան կամ անոր նման կարգադրութիւն մը ունենալու չէ. կամ ուր որ ընդհանուր քուէարկութեամբ երեսփոխաններ տեսնենք, իրաւունք կ'ունենանք ըսելու թէ հոն քաղաքական սահմանադրութիւն կամ հասարակապետութիւն կայ : Միւթէ չի՞ կրնար ըլլալ որ միեւնոյն կարգադրութիւնը երկու տարբեր տարբեր ընկերութիւններ միանգամայն ունենան, երբոր ան կարգադրութիւնն ինքնին անտարբեր է, և երկուքին ալ կրնայ յարմարիլ : Այսպէս եկեղեցի մը կրնայ ընդհանուր քուէարկութեամբ երեսփոխաններ ունենալ, առանց անով քաղաքական, սահմանադրական կամ հասարակապետական ըլլալու :

Երբոր ընդհանուր քուէարկութեան սկզբունքը տէրութեան մէջ վնասակար ազդեցութիւն կ'ընէ ըսելն ալ համոզիչ փաստ մը չէ : Ոմանք կը կարծեն թէ Հայոց ընդհանուր քուէարկութեամբ ընտրուած երեսփոխանական վարչութիւնն ունենալը տէրութեան մէջ ուրիշ հպատակ ազգերու, նաեւ տիրող ազգին օրինակ կրնայ ըլլալ, այնպէս որ անոնք ալ նոյն դրութիւնը հաստատելու ելլեն : Աս փաստին ինչ աստիճան հեղինակութիւն ունենալը չենք գիտեր : Բայց և այնպէս ասոր ալ պատասխան մը տանք :

Ազգն իրաւունք ունի հաստատելու ամեն օրէնք կամ կարգադրութիւն կամ կերպ որ իր կրօնքին հակառակ չէ, այլ մանաւանդ անոր խիստ համաձայն է, և ընկերութեան շահերը կ'ապահովընէ : Աս այսպէս ըլլալով խիստ անտեղի և անիրաւ կ'երևի մեզի որ ազգին մէկ իրաւունքը,

* Բազմաթիւ Գործող Առաքելոց հետեւեալ գլուխները : Ա. Գլ. 14—16 : Զ. Գլ. 1—6 : Ժ. Գլ. 1 : Եւրոպայէս 4, 12, 22, 23, 30, 33 համարները :

թիւները) և թէ կրօնական ընկերու-
թիւներ կան որ ընդհանուր քուէով ընտ-
րուած երեսփոխանական վարչութեան ձևն
ունին, անտեղի է ըսել թէ՝ Հայոց սահ-
մանադրութիւնը (որ ընդհանուր քուէ-
արկութեանէ զատ սահմանադրութեան ձև
ունեցող բան մը չունի) Տէրութեան մէջ
նոր և տարօրինակ է. և թէ՝ ուրիշ հասա-
րակութիւններ անկէ օրինակ կրնան առ-
նել, որպէս թէ աշխարհիս վրայ սահմանա-
դրութիւն ունեցող միայն Հայերն են :

Թող սա երկու կէտերն ազէկ միաք
անուին : Նախ որ Հայերն Օսմանեան
տէրութեան հաւատարիմ են՝ և այնպէս
ըլլալ կ'ուզեն, քանզի իրենց ազգութիւնն
ան տէրութեան տակ և անոր հողին վրայ
մինակ կամ դէթ ամենէն աւելի ապահով
է : Երկրորդ՝ Հայերը Սահմանադրութիւն
հաստատելով տէրութեան կամ անոր կա-
ռավարութեանը մէջ փոփոխութիւն ընե-
լու ամենափոքր դիտաւորութիւնն անգամ
ունեցած չեն, և չէին կրնար ունենալ : Զա-
նոնք առ բանին յորդորուին՝ ազգայնու-
թեան և յառաջագիմութեան սկիւն է, և
շարժառիթ՝ մինակ իրենց ընկերութեանը
բարեկարգութեւ և զեղծումներէ ազա-
տուելու կարօտ վարչութեան վիճակն է : Ե-
թէ, ինչպէս ըսինք, ահ երկու կէտերը ա-
զէկ միաք անուին, և անոնց հետ մէկ-
տեղ Տէրութեան կողմէն հպատակ ազգե-
րու «լուսաւորութեան» ու ժամանակին
յառաջագիմութեանը պահանջած բարե-
կարգութիւններն ընելու արտօնութիւնն
ալ չմոռցուի, յայտնի պիտի տեսնուի թէ
Հայոց սահմանադրութիւնը խափանելու
չափ վախնալու կամ կասկածելու ոչ փաստ
և ոչ իրաւունք կայ :

Մենք այսչափ ըսել 'ի սէր ազգին
պարտաւորեցանք, քանզի կը հաւատանք
թէ ազգին մէջ ազգին օգուտն ու յառա-
ջագիմութիւնը չուզող մարդիկ չկան .
բայց եթէ ազգին մէջ կամ ազգէն դուրս
կան անանկներ, թող աղէկ խորհին. քան-
զի Աստուծոյ, լուսաւորեալ աշխարհին ու
պատմութեան առջև պատասխանատու
են : Նախախնամութիւնը մարդկային ազ-
գին առհասարակ և ամեն մէկ մասին յա-
ռաջագիմութիւնը վճռած է : Դուսաւոր-

եալ աշխարհը լուսաւորութեան դէմ ե-
ղած դադանի շարժումներն անգամ քրն-
նելու ու դատելու պատրաստ կեցած է,
որուն վկայութեանը վրայ պատմութիւնը
յաւիտենական ճայնով պիտի խօսի :

ԾԱՆՈՒՅՈՒՄ

Բաւական ժամանակ է որ Մաս-
պաւրականի հասարակութեան կող-
մէն հոս դանուաղ պատուաւոր և
երկեղի անձինք՝ յիշեալ դաւառին
ժողովուրդէն ազերապ իրներով մե-
ղիկու դան, որ վասպուրականի ժո-
ղովուրդին ազգային սահմանադ-
րութեան իրենց մէջ ալ հաստատու-
ուլուն իղձերը կեդրոնական վար-
չութեան մեր թերթին միջոցով
խնայրենք : Աս նիւթին վրայ պէտք
եղած յայտարարութիւնը դալ ան-
դամուան կը թողուի :

Իմամ Ասաթ խանի Մատենադարան
ընկերութիւնը նոյն ընկերութիւնն է որ
սակից տարի մը առաջ Աստուծաւորած
անուամբ սկսէր և յարտուութեամբ կը
շարունակէ առանց նպատակն այլալելու :
Աս դրասնենակն ալ հեռաւոր տեղերէ բա-
ժանորդաց հազորդակցութեանը դիւրու-
թիւն տալու համար բացուեցաւ :

Հայ մանկաւոյն համար գիշերօթիկ Եպրայ :

Թէ գիշերօթիկ դպրոցներ տղոց դաստիա-
րակութեանը սրճափ հարկաւոր են, ամենուն
յայտնի է : Տաճխատանի մ շ Սրմաշու գիշեր-
օթիկ դպրոցն զատ՝ Հայ տղոց համար առայժմ
սասնի վարժարան մը չկայ : Աս մօտեւս շատ
ջանքեր կան որ նոր վարժարաններ բացուին :
Մասին արդէն ծանուցում մ'ըբաւ : Աւրիշ քա-
նի մը ազգասէրներնոյն դիտաւորութիւնն ունին,
ուստի կ'իմացնեն որ 50 տղոց համար ընկերու-
թեամբ վարժարան մը բանալու որոշումն ըրած
են, և թէ վերջիշեալ 50 թիւը կանխաւ գտնեն :
Աւելի բնդարձակ տեղէ կուտիւն ուղղը, շուկան
Զուխուր խանը թիւ 2 սենեակէն կրնայ պէտք ե-
ղածը խմանալ :

5

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏՊԱՐԱՆԻ ՏՆՈՐԻՆ
Ա՝ ՃԵՎԱՆԻՔԵԱՆ